



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17301

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱՐԱՆՆԵՐ

Գ Գ Բ Ո Յ Ա Յ

2001

1860

31

C-47

07

370
2059-24

37
2-97

ml



ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԳԳՐԱԾԱՑ

1004
15321

2010

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԴՊՐՈՑԱՑ

Յօդուած 1.

Կրթութեան ժողովը՝ իր Յայտագրին առաջին յօդուածոյն համեմատ *) Ազգային կրթութիւնը առաջ տանելու նպատակաւ՝ Հայկազնեան Դպրոցներու Ընկերութիւնը հաստատեց :

Յօդ. 2.

Հայկազնեան դպրոցաց հաստատու.

*) Ազգային կրթութեան ժողովոյն Յայտագրին առաջին Յօդուածն է. « Յամի Տեառն 1860 Օգոստոսի 15 ին ըստ նոր տուժարի, Կոստանդնուպոլսոյ Ամենապատիւ Նախագահ Եպիսկոպոսապետ Գերայայծառ Հասունեան Անտոն Վարդապետին գահերկցութեամբն Եկեղեցական եւ Աշխարհական անդամներէ բաղկացեալ ժողով մը կազմուած է, որուն էական վախճանը Հայ ազգի Կրթողիկեայ Հասարակութեան մէջ Ազգային կրթութիւնն ուղղելու եւ յառաջ տանելու միջոցները հոգան է՝ Հայ ազգայնութեան հիման վրայ, Կրթողիկէ Աւարելական Հռոմեական կրօնին Վարդապետութեանցն ու Բարոյականին ճշգիւ հետեւելով »:

Թիւնը՝ բարերարական հիմնարկութիւն մին է : Ալ որ տարեկան առւ բքը կը վճարէ , այս ընկերութեան անդամ կ'ըլլայ :

Յօդ . 3 .

Այս հիմնարկութեան վախճանն է՝ այն պիտոյքները և օգնութեան աղբիւրները հոգալ՝ որոնք Ազգային կրթութեան գործը յառաջ տանելու և տարածելու հարկաւոր են :

Յօդ . 4 .

Այս հիմնարկութեան ձեռքը գրու նուած գրամական նպաստները՝ Հայկազնեան դպրոցաց շինութեանը , պահպանութեանը և բարեկարգութեանը պիտոր գործածուին :

Յօդ . 5 .

Ժողովը պիտի կարենայ այս եկամտից մէկ մասը գործածել սրուեստական մասնաւոր դպրոց մը հաստատելու համար :

Յօդ . 6 .

Ժողովը՝ չորրորդ և հինգերորդ յօդուածներուն մէջ նշանակուած դպրոցներուն համար մասնաւոր կանոնադրութիւններ պիտի հրատարակէ :

Յօդ . 7 .

Այս հիմնարկութեան կառավարութիւնն ու մատակարարութիւնը՝ Ազգային կրթութեան ժողովոյն ձեռքն է :

Յօդ . 8 .

Ժողովը՝ մնայուն Գանձնաժողով մը պիտի սահմանէ , որն որ նոյն Դպրոցաց հաստատութեան եկամուտը պիտի ժողվէ , ու անոնց հաշիւը պիտի բռնէ : Այնպէս անոր պարտքը պիտի ըլլայ ժողվուած գրամները աւելի շահաւոր ընելու համար՝ իր խորհրդածութիւնները կրթութեան ժողովոյն առաջարկել : Այս Գանձնաժողովը՝ կրթութեան ժողովոյն սովորական և արտաքոյ կարգի անդամներէն պիտի

կազմուի: Պաշտօնին մէկ տարուան հաւ
մար է. բայց կրնան նորէն ընտրուիլ:

Յօդ. 9.

Հայկազնեան դպրոցաց ընկերագրու-
թիւնը՝ դրամաբաժիններով կազմուած է:
Մէկ դրամաբաժինն տարեկան տուրքը՝
Օսմանեան լիրա մըն է, ու երեք ամսէ
երեք ամիս պիտի վճարուի:

Յօդ. 10.

Ով որ մէկ բաժնի համար՝ մէկէն տասն
ու հինգ Օսմանեան լիրա կը վճարէ, այս
ընկերութեան մշտնջենաւոր անդամ կ'ըլ-
լայ:

Յօդ. 11.

ժողովը՝ դպրոցաց ընկերութեան ամէն
մէկ բաժանորդին՝ ժողովոյն Վանձապետէն
ստորագրուած ու կնքովը կնքուած ստու-
սակ մը պիտի տայ՝ առած դրամաբաժիննե-
րուն թիւը ու վճարած մասը նշանակելով:
Կրթութեան ժողովը ամէն բաժանորդնե-

րու տարւոյն վախճանը՝ ընկերութեան տա-
րեկան Յեշատակագրին մէկ օրինակը պե-
տոր տայ:

Յօդ. 12.

Որ և իցէ անդամ որ բաժանորդու-
թենէն զատուած է, ամենեկին իրաւունք
պիտի չունենայ՝ ամբողջ և կամ մասամբ
պահանջելու՝ իրեն որ եւ իցէ վախճանաւ
տուածը կամ վճարածը, կամ ուրիշ որ
եւ իցէ ծառայութեանց փոխարէնը պա-
հանջելու:

Յօդ. 13.

Ամէն բաժանորդ՝ որ իր ստորագրած
բաժինը բոլոր տարուան մէջ չվճարէր,
Դպրոցաց հիմնարկութեան ընկերութենէն
զատուած կը սեպուի:

Յօդ. 14.

Կրթութեան ժողովը՝ դպրոցաց հիմ-
նարկութեան դրամագլխոյն ու թին հինգը
սովորական ծախքերուն, և ութին մէկը
արտաքոյ կարգի ծախքերու համար պիտոր

գործածէ, իսկ ութին երկուքը պահեստի
դրամագլուխ պիտի հաստատէ :

Յօդ. 15.

Արթութեան ժողովը տարուէ տարի
այս ընկերութեան տարեկան Յիշատակա-
գրին մէջ՝ բաժանորդներուն ցանկը պի-
տոր յօրինէ և հրատարակէ :

Յօդ. 16.

Արոնք որ այս ընկերութեան պարգեւ
մը կամ որ եւ իցէ ծառայութիւն մը ըրած
ըլան, ժողովոյն տարեկան Յիշատակագրին
մէջ պատուաւոր գովութեան արժանի պի-
տի ըլլան : Իսկ մեծ պարգեւներու կամ
նշանաւոր ծառայութեանց համար՝ ժո-
ղովը պիտի յայտնէ իր երախտագիտու-
թիւնը՝ յատուկ նշանակներով :

Յօդ. 17.

Որ եւ իցէ բաժանորդի մը ծախքովը
կանգնուած դպրոց՝ բարերարին անունը
պիտի կրէ, և առանձին արձանագիր մը
պիտի գրուի դպրոցին գլխաւոր գրանը
վրայ :

Յօդ. 18.

Ամէն հայասէր օտարական՝ որ այս
ընկերութեան կը գրուի, պատուց յիշա-
տակութիւն պիտի ունենայ՝ ժողովոյն տա-
րեկան Յիշատակագրին մէջ : Արթութեան
ժողովը անոր ըրած ուրիշ որ եւ իցէ բարե-
բարութեանց փոխարէն՝ իր կատարեալ
երախտագիտութիւնը պիտի յայտնէ :

Յօդ. 19.

Ամէն բաժանորդ որ ժողովոյն խոր
հուրդ մը հաղորդել և կամ աս հիմնաբ-
կութեան օգտակար գիտողութիւն մը
կ'ուզէ ընել, պէտք է որ գրով Արթու-
թեան ժողովոյն Քարտուղարին ուղղէ :

Յօդ. 20.

Այս կանոնագրութեանցս հիմնական
սկզբունքները անխախտելի են :

Ընդունուած է 1860 Վ. կտեմբերի 11/26 էն գումար-
ուած նիստին մէջ :

ՀԱՅԿԱԶՆԵԱՆ

ՄԵՏԵՆԵԴԵՐԸ ԵՒ ԹՆԿԵՐԸ

Յօդուած 1.

Աղքատի կրթութիւնը յառաջադէմ
ընելու վախճանաւ՝ յողովը Հայկազնեան
Սատենագարան մըն ալ հաստատեց :

Յօդ. 2.

Այս հիմնարկութիւնը՝ Աղքատի կր-
թութեան ժողովոյն կառավարութեանն
ու մատակարարութեան տակն է :

Յօդ. 3.

Սատենագարանը Գիւանապան կամ
Գրապետ մը ու Օգնական մը կ'ունե-
նայ, կրթութեան ժողովէն ընտրուած,
որոնք Հայկազնեան Սատենագարանին
հոգը պիտի ունենան : Ասոնց պաշտօնը
տարեկան է, բայց կրնան նորէն ընտրուիլ :

Յօդ. 4.

Ժողովը երախտագիտութեամբ կ'ընդունի որ եւ իցէ գիրք կամ պարգեւ՝ որ այս Մատենադարանին ընծայուի: Իսկ նշանաւոր պարգեւներ ընողներուն՝ Ժողովը մասնաւոր օրինակաւ կը յայտնէ իր երախտագիտութիւնը:

Յօդ. 5.

Այս պարգեւներուն եւ պարգեւտալաց անուններուն ցուցակը կը շինուի, ու Մատենադարանին սրահին մէջ կը կախուի:

Յօդ. 6.

Ամէն հայասէր օտարական՝ որ Հայկազնեան Մատենադարանին գիրք մը կամ ուրիշ ընծայ մը նուիրէ, ընկերութեան տարեկան Յիշատակագրին մէջ մասնաւոր պատուոյ յիշատակ մը կ'ունենայ: Ժողովը պիտի յայտնէ իր կատարեալ երախտագիտութիւնը այն ամէն հայասէր օտարակա-

նայ որ մասնաւոր ինամբ ցուցնեն Մատենադարանին պայծառութեանը:

Յօդ. 7.

Հայկազնեան Մատենադարանին պարգեւատուները, Վարդապետ Հիմարիութեան բաժանորդները, ու Կրթութեան Ժողովքին ամէն անդամները՝ իրաւունք ունին Հայկազնեան Մատենադարանը յաճախելու, պահելով Մատենադարանին կանոնադրութիւնները:

Յօդ. 8.

Կրթութեան Ժողովը իրաւունք ունի Օժանդակ Մատենադարաններ կազմելու, Հայկազնեան Մատենադարանին մէջ մէկ օրինակէն աւելի գանուած գիրքերով:

Յօդ. 9.

Այն Ժողովը ամէն տարի նախընթաց յօդուածին մէջ ըսուած կերպով աւելուած մատեաններուն ցանկը յօրինելով ընկերութեան տարեկան Յիշատակագրին մէջ

պիտի անցրնէ գրքերուն ու պարգեւողաց
անուանքը, և անոնց որ մատենադարանին
համար որոշուած ըլլայը:

Յօդ. 10.

Հայկազնեան Մատենադարանին պար-
գեւեալ մատեաններուն վրայ՝ Կրթու-
թեան ժողովոյն, կնիքը ու պարգեւողին
անունը պիտի ըլլայ:

Յօդ. 11.

Ժողովը Հայկազնեան Մատենադարա-
նին հետ Թանգարան մին ալ հաստատած
է, և շնորհակալութեամբ պիտի ընդունի
իրեն ընծայուած որ եւ իցէ արուեստա-
կան կամ գիտնական հաւարման արժանի
նիւթերը:


Յօդ. 12.

Որոնք որ այս Թանգարանին պարգեւ-
մը ընեն, Մատենադարանին պարգեւա-
տուաց արածնութիւնները պիտի վայելնէ:

Յօդ. 13.

Ազգային կրթութեան ժողովը Տեսուչ
մը և Օգնական մը կ'անուանէ, որոնք
Թանգարանին հոգը պիտի ունենան: Ասոնց
պաշտօնը տարեկան է, բայց կրնան նորէն
ընտրուիլ:

Ընդունուած է 1860 Դեկտեմբերի 14/26 ին դումա,
բուած նիստին մէջ:







2013

« Ազգային գրադարան »

1730



NL0050427



ՂԱԼԱԹԻԱ ԿՊՕԼՍՈՅ

Ի ՏՊԱՐԱՆԻ Յ. ՄԻԻԿԵՆՏԻՍԵԱՆ

1860